ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

# ԿԱՅ ՄԻ ԿԱՊՈՅՏ ՃԱՆԱՊԱՐՀ

Բուքն էլ վշտի թէ քեզ ափից ափ քշի,
Սի՛րտ, չլքուես դու ծովերում մշուշի, —
Կայ մի կապոյտ ճանապարհ:

Անկուշտ կրակն ընկերներից նախանձի
Ուր էլ լինես. թէ քեզ յաւէտ հալածի, —
Կայ մի կապոյտ ճանապարհ:

Թէ սրտագին մտերմուհին քեզ դրժի,
Սրտիդ թասում թոյնն էլ թափի, դու յիշիր
Կայ մի կապոյտ ճանապարհ:

Թէ կարիքի սեւ խորշակն էլ քեզ ընկճի,
Հոգիդ ամռան երկինք մնայ թող վճիտ, —
Կայ մի կապոյտ ճանապարհ:

Երազանքի անտառներում զմրուխտէ,
Նոճիների կամարի տակ հովաթեւ
Կայ մի կապոյտ ճանապարհ:

Աչքդ յառած գագաթներին լուսափառ,
Ե՛րգ, դու կտրի՛ր սար-ձո՛ր, անտա՛ռ, առապա՛ր, —
Կայ մի կապոյտ ճանապարհ:

ԱՇՈՏ ԳՐԱՇԻ

digitised by A.R.A.R.@